№ 83 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ԱՊՐԻԼԻ

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 22 ԱՊՐԻԼԻ № 83

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Բաժանորդագրութիւն ընդունվում է ամեն ժամանակ
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS. Rédaction «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ
7 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամականիշով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սօֆիա Ալազեան Թինիբեկեանն՝ իր դստեր հետ միասին՝ խորին վշտով յայտնում է Թանգագին ամուսնու և հօր՝

Անդրէաս Արզումանեան ԹԻՆԻԲԷԿԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Յուղարկաւորութիւնն այսօր, հինգշաբթի, ապրիլի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին իր սեփական տնից (Գրիբոյեդովսկայա, № 14) դէպի Վանքի մայր-եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 450. 1—1

Իսայ Արզումանեան և Եղիսաբէթ Աբրահամեան Թինիբեկեանները խորին վշտով յայտնում են՝ առաջինն իր Թանգագին եղբօր, իսկ երկրորդն իր տագեր՝

Անդրէաս Արզումանեան ԹԻՆԻԲԷԿԵԱՆԻ

մահը, որ տեղի է ունեցել կարճատև և ծանր հիւանդութիւնից յետոյ: Յուղարկաւորութիւնն այսօր, հինգշաբթի, ապրիլի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի սեփ. տնից (Գրիբոյեդովսկայա, № 14) դէպի Վանքի մայր-եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: 451. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին Ընկերութեան

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ կայանալու է ապրիլի 23-ին (շարունակութիւնը 24-ին և 25-ին), երեկոյեան ժամը 7-ին Ընկերութեան դահլիճում (Արամ-Արամեան հրապ., սեփ. տուն): 448. 2—1
(ա. օ.) (տ.)

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խնդրում է Ընկ. մեծարգոյ անդամներին շնորհ բերել

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

շարունակութեանը վաղը, ուրբաթ, ապրիլի 23-ին, ցերեկվայ ժամը ճիշդ 12-ին, Գանօվսկայա № 19.

Օրակարգն է՝ ընտրութիւններ: 452. 1—1

Հինգշաբթի, ապրիլի 22-ին
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Արամ-Արամեան հրապարակ սեփ. տ.) կայանալու է
ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
ղեկավարութեամբ տ. Իլիա Սպենդիարեանի: Երեկոյթի ծրագիրը բովանդակալից է և ուսանելի: Մասնակցողները պիտի լինեն Խուդադեան որբանոցի սաները:
Մուտքը չափահասների համար 50 կոպ., աշակերտների համար 20 կոպ.:
Սկիզբն է ժամը 8-ին: 445. 1—1

ԵՍ, ԱՆՆԱ ՉԻԼԼԵԱԳ,

աճեցրել եմ իմ անսովոր երկար (185 սանտիմէտր երկար) մազերս—որ յիշեցնում է Լօրելէյի մազերը—շնորհիւ իմ հնարած առանձին պոմադայի 14-ամեայ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ: Այդ պոմադան ճանաչված է լաւ միջոց մազերը Թափվելու դէմ, միևնոյն ժամանակ նպաստում է նրանց աճման և արմատների ամրացման: Շնորհիւ այդ պոմադայի, ունենում են խիտ և ճոխ երկար միրուք, նոյնպէս և (մինչև անգամ կարճ ժամանակեայ գործածութիւնից յետոյ) գլխի մազերի և միրուքի իսկական փայլ: Միևնոյն ժամանակ պոմադան պահպանում է մազերը շուտ ճերմակելուց, նոյնիսկ ծերութեան ժամանակ:

Բանկայի գինը

3 եւ 5 ռուբլի

Գլխաւոր պահեստը՝ Кавказское Т-во Торговли Аптекарскими товарами, Թիֆլիսում, Բագւում և Բաթումում: (շ. հ.) 85 (տ.). 25—25

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր փաթեթը (քուսօ):
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում:
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շէնքում.
Տելեֆօն № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՁՐԻ
(շ. շ.) (տ.) 310. 50—9

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

I

Քաղաքական հարցեր, որոնք վտանգ սպառնային համաշխարհային խաղաղութեան—ներկայումս չը կան: Քաղաքական աշխարհի օրվայ հրատապ հարցերն են՝ Պարսկաստանի վիճակը, ապստամբութիւնը Ալբանիայում, խառնվութիւնները Չինաստանում և պարլամենտական ընտրութիւնները Ֆրանսիայում:

Պարսկաստանի վիճակը յուզմունք և անձկութիւն է պատճառում բոլոր այն քաղաքագէտներին և անձանց, որոնք անկեղծօրէն փափագում են արևելեան այդ ամենահին պետութեան բարգաւաճման և զարգացման: Պարսկաստանը մեծ ճգնաժամ է անցկացնում և յայտնի չէ թէ ինչով կը լուծվի այդ ճգնաժամը՝ վերածնութեամբ թէ մահով, այսինքն անկախութեան կորստեամբ: Բռնապետութեան տապալումը և սահմանադրութեան հրատարակումը դեռ չը կարողացին տալ Պարսկաստանին կայուն վիճակ դեռ չը կարողացին ստեղծել այնպիսի մի կառավարութիւն, որ կարողանային վստահութիւն ներշնչել թէ օտար պետութիւններին և թէ իրան՝ պարսիկ ժողովրդին: Ժողովրդական ներկայացուցչութիւնն էլ՝ մէջլիսը չը կարողացաւ նոյնպէս հեղինակութիւն և ազդեցութիւն ձեռք բերել ու ղեկավարող մարմին հանդիսանալ: Կուսակցական պառակտումները, ծայրայեղների և նացիօնալիստների երկպառակութիւնները թուլացրին մէջլիսը և չը ստեղծվեց Պարսկաստանի մէջ մի այնպիսի մարմին, կառավարչական կամ սահմանադրական-օրէնսդրական, որ կարողանար հանել, դուրս քաշել երկիրը քաօսից և վերստեղծել, կերպարանափոխել նրան: Այն, ինչ որ կարողացին անել Թիւրքիայում հին րէժիմ տապալողները՝ երիտասարդ Թիւրքերը, այն է ազատել իրանց հայրենիքը օտարերկրեայ խնամակալութիւնից—այդ չը կարողացան անել պարսիկ յեղափոխականները և հին րէժիմ տապալողները: Սահմանադրութիւնը վերջ դրեց Թիւրքիայում օտար պետութիւնների միջամտութեան Թիւրքական ներքին գործերում, և հէնց դրա մէջ է կայանում երիտասարդ-Թիւրքերի իրանց հայրենիքին մատուցած մեծ ծառայութիւնը: Բայց սահմանադրութիւնը Պարսկաստանում, ընդհակառակն, առաջ բերեց օտար պետութիւնների միջամտութիւնը Իրանի ներքին գործերում և խնամակալութիւնը՝ երկրի վրա: Այստեղ է հետևանքների ահագին տարբերութիւնը, որ կայ պարսկական և Թիւրքական յեղափոխութիւնների միջև:

Օտարերկրեայ խնամակալութիւնը և միջամտութիւնը արտայայտվեց անգլօ-ռուսական համաձայնութեամբ, որի վրա և հիմնված է ռուսաց կառավարութեան քաղաքականութիւնը և գործելակերպը Պարսկաստանում, մի գործելակերպ, որի դէմ շարունակ բողոքում են պարսիկ յեղափոխականները և պարսիկ ինտելիգենցիան:

Ամենից շատ յուզում է պարսիկներին և մէջլիսին ռուսաց զօրքի մնալը Պարսկաստանում: Եւ սակայն ոչ միայն այդ հարցի, այլ և միւս բոլոր կարևոր հարցերի, ինչպէս փոխառութեան, երկաթուղային շինութեան խնդիրների վերաբերմամբ կատարեալ համերաշխութիւն կայ Ռուսաստանի և Անգլիայի միջև և վերջինս Ռուսաստանին է թողել անգլօ-ռուսական համաձայնութիւնը իրագործելու պաշտօնը. այսինքն այն ամենը, ինչ որ կատարում է ռուսաց կառավարութիւնը Պարսկաստանի վերաբերմամբ, լինում է Անգլիայի կատարեալ համաձայնութեամբ: Դրա մէջ այլ ևս ոչ մի կասկած լինել չէ կարող, քանի որ անգլիական արտաքին գործերի մինիստր սըր Էդուարդ Գրէյը նորերս յայտնեց անգլիական պարլամենտում, թէ հիւսիսային Պարսկաստանի մի քանի կէտերի ժամանակաւոր գրաւումը ռուսական զօրքերով առաջ է եկել օտարազգիների ապահովութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնից և աւելացրեց, թէ Թաւրիզի անգլիական հիւպատոսի զեկուցման համաձայն, այս րոպէիս ռուսաց զօրքերի հեռանալը յուզմունք կառաջացնէ եւրօպացի բընակիչների մէջ: Սրանով անգլիական արտաքին գործերի մինիստրը յայտնապէս պաշտպանում է ռուսական ծրագիրը ընդդէմ մէջլիսի և Թէհրանի կառավարութեան, որոնք անդադար պահանջում են անմիջապէս յետ կանչել ռուսաց զօրքերը հիւսիսային Պարսկաստանից:

Անգլօ-ռուսական համաձայնութիւնը օգտակա՞ր է արդեօք Պարսկաստանին և իրան Ռուսաստանին—այդ մասին յետոյ կը խօսենք. բայց անկասկած է այն, որ այդ համաձայնութիւնը սաստիկ կաշկանդում է պարսկական մէջլիսի և նոր րէժիմի կառավարութեան ձեռքերը: Սահմանադրութեան բարիքներն իրագործելու և րէֆօրմներ մտցնելու համար անհրաժեշտ է դրամ, որից պարսկական պետական գանձարանը ոչ միայն դատարկ է, այլ և նա ծանրաբեռնված է ահագին պարտքերով: Արդիւնաբերութիւնը զարգացնելու, հողի տակ ծածկված անբաւ հանքային հարստութիւնները շահագործելու համար հարկաւոր է ամենից առաջ կառուցանել երկաթուղիներ, իսկ դրա համար հարկաւոր են միլլիօններ: Ուրեմն անհրաժեշտ է կնքել փոխառութիւն: Ներքին փոխառութիւնը անհնարին է և չէ իրագործվում, որովհետև պարսիկ ժողովրդի մեծամասնութիւնը սոսկալի չքաւոր է, իսկ ունևոր դասակարգը՝ վաճառականները և կալուածատէրերը չեն վստահանում և հաւատ չունեն ներկայ կառավարութեան վրա կամ չեն համակրում նրան: Մնում է ուրեմն կնքել արտաքին փոխառութիւն: Բայց արտաքին փոխառութիւնն ևս առանց Անգլիայի և Ռուսաստանի համաձայնութեան և թոյլտուութեան անկարելի է, իսկ իրանց՝ այդ երկու պետութիւնների առաջարկած պայմանները նպաստաւոր չեն, որովհետև այդ երկու պետութիւնները փոխառութիւնը աջողեցնելու համար պահանջում են որոշ քաղաքական զիջումներ: Կայ մի երրորդ պետութիւն՝ Գերմանիան, որ փորձեց և աշխատում է օգուտ քաղել այդ հանգամանքից և իր միջնորդութիւնն է առաջարկում պարսից կառավարութեան՝ աջողեցնելու փոխառութիւնը Գերմանիայում, և հարկէ այն նպատակով, որ իր առևտրական, տնտեսական շահերը զարգացնէ Իրանում. ուստի այդ յոյսն ևս պէտք է համարել անտեղի, եթէ ճիշդ է այն լուրը, որ հաղորդում է «Рус. Вѣд.» թերթի Թէհրանի թղթակիցը, թէ Պարսկաստանին յանձնվեց մի յիշատակագիր անգլիական և ռուսական կառավարութիւնների կողմից միասին, որով առաջարկվում է առանց այդ երկու պետութիւնների գիտութեան չը մտնել որևէ բանակցութեան մէջ ուրիշ օտար կառավարութիւնների հետ, նոյնպէս և չը տալ կօնցէսիաներ ու չը կատարել փոխառութիւններ:

Ահա ինչ վիճակի մէջ են ներկայումս պարսկական գործերը:

Հ. Առաքելեան

ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքիայի հայ-կաթօլիկների պատրիարք-կաթողիկոսի ընտրութիւնը, որ այնքան տարաձայնութիւնների առիթ տուեց վերջերս, ստացել է աջող լուծում: Ընտրական բոլոր գործողութիւնները կատարված լինելով, ապրիլի 10-ին հայ-կաթօլիկների ազգային ընդհանուր ժողովը վերջնական քըւէարկութեամբ միաձայն պատրիարք կաթողիկոս է ընտրել Ադանայի առաջնորդ Պօղոս արքեպիսկոպոս Թէրզեանին, որ, ինչպէս յայտնի է, ազատամիտ և ազգային նուաճակցութեան կանդիդատն էր: Հայ-կաթօլիկ ժողովուրդը չափազանց գոհ է մնացել այս ընտրութիւնից:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ցարսկօէ-Սէլօ, 19 ապրիլի

Երէկ և այսօր Նորին Կայսերական Մեծութիւնները Ցարսկօէ-Սէլօյի Մեծ պալատում ընդունեցին շնորհաւորանքներ Զատկի առիթով պալատական պաշտօնեաներից, շքախմբերից, կառավարիչ անձերից և զօրահրամանատարներից: Այսօր շնորհաւորեցին Մեծ Իշխանները: Առաւօտեան շնորհաւորեց հոգևորականութիւնը:

Երէկ Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան Ալէքսանդրեան պալատում ընդունեց շնորհաւորումներ: (Հ. Գ.)

—

Հէլսինգֆորս, 20 ապրիլի

Հիմնական օրէնքների մասնաժողովը առաջարկում է սէյմին յայտնել, որ սէյմը անկարող է ներկայացնել պահանջվող զեկուցումը, որովհետև Բարձրագոյն առաջարկութեան հետ առաջադրված օրինագիծը պարունակում է Ֆինլանդիայի հիմնական օրէնքների արմատական փոփոխութիւն. սէյմը չէ կարող վարվել վճռի իրաւունքով: Օրինագծին կցված բացատրիչ գրութիւնը հակասում է գործող օրէնքին, պատմութեան հաւաքածութեանը: Ֆինլանդիան չէ կարող ընդունել, որ ռուս մեծահոգի ժողովուրդը կարող է բաւականութիւն զգալ ֆինլանդական աւտոնօմիան ոչնչացնելուց: Սէյմը պատրաստ է լուծել վիճելի հարցերը:

(Հ. Գ.)

—

Հէլսինգֆորս, 18 ապրիլի

Եապօնական պատկերահանդէսը Աբօյում գեներալ-նահանգապետի պահանջով փակվեց, որովհետև նրա մէջ ցուցադրված էին ռուսական զէնքի համար վիրաւորական պատկերներ: Աբօյի ոստիկանապետին առաջարկված է մի շաբաթվայ մէջ հրաժարական տալ:

Լօնդօնից հեռագրում են, որ բէլգիական պարլամենտի անդամները ստորագրեցին Պետական Դումային ուղղված մի բողոքագիր ֆինլանդական հարցի առիթով: Նոյն տեսակի բողոքագրեր պատրաստվում են Գերմանիայում և Ֆրանսիայում: Անգլիական պարլամենտի ստորին պալատը այդ խսկ հարցի առիթով պատրաստում է մի յուշագիր Դումայի անունով:

(Հ. Գ.)

—

Լօնդօն, 20 ապրիլի

Մանչէստէրի առևտրական պալատը մի բանաձև ընդունեց, որի մէջ ասված է թէ՝ ռուսաց կառավարութեան Ֆինլանդիայի վերաբերութեամբ արած քայլերը անհանգստութիւն են առաջ բերում, որովհետև կարող են կարճել Մեծ-Բրիտանիայի և Ֆինլանդիայի առևտրական շրջանառութիւնները, որպիսի հանգամանքը կը վնասէ արդիւնաբերողներին և առևտրական շրջաններին:

Բարրօու-Ֆէրնէսում տեղի ունեցաւ «Պրինցէսս-Ռօյեալ» զրահապատ մարտանաւի հիմնադրութիւնը. 26,000 տօնն, երկարութիւնը 700 ֆուտ, արագութիւնը 30 ուզլ և հանդիսանում է ամենամեծ մարտանաւը աշխարհիս վրա: Կառուցումը կը վերջանայ երկու տարում:

Դիտի առևտրական պալատը ընդունեց բանաձև ֆինլանդական հարցի առիթով նման առևտրական միւս պալատների ընդունած բանաձևերին:

(Հ. Գ.)

—

Բերլին, 19 ապրիլի

Մայիսի 1-ը անցաւ հանգիստ:

(Հ. Գ.)

—

Պարիզ, 19 ապրիլի

Մայիսի 1-ը ընդհանուր առմամբ հանգիստ անցաւ: Բուլօնի անտառում աննշան ընդհարում եղաւ բանւորների և ոստիկանների միջև, որի ժամանակ վիրաւորվեց մի ոստիկան, ձերբակալվեցին 7 հոգի: (Հ. Գ.)

—

Ժընեվ, 19 ապրիլի

Մայիսի 1-ի առիթով ընդհարումներ պատահեցին ոստիկանների և ամբոխի միջև. կալանաւորված են երեք մարդ:

(Հ. Գ.)

—

Ռիգա, 20 ապրիլի

Չը նայած Թռուցիկներին, որոնցով հրաւիրում են տօնել մայիսի 1-ը, օրն անցաւ հանգիստ: Շրջակայքում պարզված կարմիր դրօշակները ոստիկանութիւնը վերացրել է: (Հ. Գ.)

—

Միտավա, 20 ապրիլի

Զատկի առաջին օրը Կուրլեանդիայի մի քանի վայրերում փորձեր արվեցին ցրելու Թռուցի՛կներ մայիսի 1-ի տօնման մասին, բայց ոստիկանութեան ձեռք առած միջոցներով խափանվեց իր ժամանակին տօնակատարումը:

(Հ. Գ.)

—

Դինենբուրգ, 20 ապրիլի

Գործադուլ արին Նաւահանգստի բանւորները և մետաղագործները, որոնք, միանալով գործարանի շինարարական բանւորներին, ջարդեցին էլեքտրաքարշի վագոնները և յարձակվեցին դրագոնների խմբի վրա։ Անկարգութիւնների վայրն ուղարկվեցին չորս հարիւր զինուոր։

Եկան զօրքերը։ Անկարգութիւնները շարունակվում են։ Ժանդարմների վրա քարեր են նետում։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 20 ապրիլի

Մայիսի կէսերին սպասվում է իտալական արտաքին գործերի մինիստրը՝ ի պատասխան կանցլերի այցելութեան։ (Հ. Գ.)

—

Լոնդոն, 18 ապրիլի

Հրատարակվեց մի օրինագիծ լորդերի պալատի veto-ի իրաւունքի վերացման մասին։ (Հ. Գ.)

—

Խրիստիանիա, 20 ապրիլի

Հանդիսաւոր կերպով հողին յանձնըվեց Բիէրնստէրնի մարմինը Թագաւորական զոյգի և արտասահմանեան միապետների ներկայացուցիչների ներկայութեամբ։ Հանգուցեալի յիշատակին նուիրած ճառ արտասանեց Նանսէնը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 20 ապրիլի

Հավասի գործակալութիւնը հերքում է լրագրական այն լուրը, իբր Պետերբուրգի ֆրանսիական դեսպանը թողնում է իր պաշտօնը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 20 ապրիլի

Ժամանեց Իզվոլսկին։ Քաղաքական գիտութիւնների բարձրագոյն դպրոցում՝ ներկայութեամբ ռուսական դեսպանատան անդամների, քաղաքական և ֆինանսական շրջանների ներկայացուցիչների և լի դահլիճի առաջ՝ տեղի ունեցաւ Պարիզի ռուսական ֆինանսական ներկայացուցչի հաղորդագրութիւնը ռուսական բիւջէի մասին։ Նախագահում էր Էմիլ Լուբէն, որն իր առաջարկած եզրափակման մէջ առանձնապէս շեշտեց պետական վարկի ամրապնդման համար Ռուսաստանում մտցված ու գործադրվող ագրարային ռէֆորմի նշանակութեան վրա։ (Հ. Գ.)

—

Բեռլին, 18 ապրիլի

Աւագների պալատը 140 ձայնով ընդդէմ 94-ի ընդունեց ընտրողական օրինագիծը, որը յետոյ յանձնվեց լանդտագին։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 18 ապրիլի

Կրետական հարցի առիթով Սուդայի նաւամատոյցը ուղարկվեցին «Ժիւլ Միշլէ» զրահանաւը և «Սիւրպրիզ» յածանաւը։ Նաև պատուիրագրված է Տուլոն՝ փուլթանակի ուղարկել «Ադմիրալ Շարնէ» մարտանաւը։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Ֆինլանդական մասնաժողովի նախագահ՝ Պետական Խորհրդի կողմից ընտրվեց Դուրնովօն։

Քաղաքային դուման 1000 րուբլի մրցանակ որոշեց աջող օդագնացութեան համար։

Գրական ֆոնդի ընդհանուր ժողովը որոշեց գրողների համագումարին չը մասնակցել։ («Б.»)

—

Բեռլին.—1907 թւի նոյեմբերին այստեղ ձերբակալվեց Տէր-Պետրոսեան ազգանունով մի երիտասարդ պայուսակը ձեռքին, որի մէջ գտնվեցին պայթուցիկ նիւթեր։ Կրկնակի անգամ փորձ եղաւ դատել Տէր-Պետրոսեանին, բայց անաջող անցաւ, որովհետև դատաւորը և դատախազը նրան ընդունեցին հոգեկան հիւանդի տեղ։ Մի ամիս անց գերմանական ոստիկանութիւնը Տէր-Պետրոսեանին յանձնեց ռուսաց ոստիկանութեան ձեռքը։ Բեռլինի փաստաբանին Թիֆլիսից տեղեկացրին, թէ երիտասարդին յանձնում են պատերազմական դատարանին։ Փաստաբանի հեռագրական բողոքի համաձայն՝ գործը դադարեցրին։ Այժմ հեռագիր ստացվեց, որ Տէր-Պետրոսեանին դատելու են ապրիլի 16-ին։ Մտադիր են դիմել Փուշկովի միջնորդութեան։ («Б.»)

—

Հռոմ.—Իտալական Թագաւորը և Թագուհին Մոնակոյի իշխանի ուղեկցութեամբ շուտով կայցելեն Կ. Պոլիս։ («Б.»)

—

Օդեսսա.—Օգոստոսի 15-ին այստեղ կը բացվի համառուսական առաջին օդագնացութեան համագումարը։ («Б.»)

—

Լոձ.—Փակվեցին հրէական երեք ընկերութիւններ։ («Б.»)

—

Բուխարեստ.— Պահպանողականների մի մեծ խումբ պրեմիէր Բրատիանուի դէմ բողոքելու նպատակով շարժվեց դէպի Թագաւորական պալատը։ Ոստիկանութիւնը և զօրքերը յետ մղեցին ցուցարարներին առանց արիւնհեղութեան։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

Կ. Պոլիս, 20 ապրիլի

Կառավարութիւնը համաձայնութիւն կապեց մեծամասնութեան ֆրակցիայի հետ։ Ճգնաժամի երկիւղն ի չիք դարձաւ։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 19 ապրիլի

Կաբինէտը տեղեկացրեց, որ համեբաշխ է ֆինանսների մինիստրի հետ, ապրիլի 21-ին պատգամաւորների պալատում համապատասխան դեկլարացիա կը ներկայացնէ և սահմանադրութեան համաձայն կը պահանջէ երկրորդ անգամ քննել պրինցուհիների ամուսինների ռոճիկ նշանակելու հարցը։ Երկրորդ անգամին դրական հետևանք չը ստացվելու դէպքում ամբողջ կաբինէտը կը հրաժարվի։

Այսօր «Մ. և Ա.» կուսակցութիւնը կաբինէտի անդամների հետ միասին քննում է ծագած միջադէպը, որի պատճառ դարձաւ ոչ այնքան բիւջէտային տարաձայնութիւնը, որքան ալբանական գործերը, և կը նշանակէ պարլամենտական յանձնաժողով։ Յոյս կայ համաձայնութեան, որպիսի հանգամանքը կը վանէ մինիստրական ճգնաժամը։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 19 ապրիլի

Հավասին հեռագրում են Կանէից. «Մահմէդական պատգամաւորները յայտնեցին, թէ մտադիր են բացակայել կրետական ազգային ժողովի առաջին նիստում, որովհետև վերջինս պէտք է բացվի յունաց Թագաւորի անունով»։ (Հ. Գ.)

ԱԼԲԱՆԱԿԱՆ ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ

—

Սալոնիկ, 17 ապրիլի

Ֆերիզովիչի շրջակայքում ճակատամարտը աննպաստ էր ալբանացիների համար։ Պրիշտինի հինգ բատալիոններ միացան Կաչանիկի շրջանի զօրքերի հետ։ Թիւրքաց զօրքը գրաւեց կիրճի մուտքը։ Նրա ամենակարևոր մասը գտնվում է ալբանացիների ձեռքում։

Երէկ, Կաչանիկի մօտ տեղի ունեցած կռւից յետոյ, Շէվքէթ-Տուրգութ փաշան աննշան զօրախմբով յառաջ գնացքով անարգել եկաւ Կաչանիկ, որ արդէն մաքրված է ալբանացիներից։ Երեկոյեան հասաւ ամբողջ արշաւախումբը։ Առաւօտեան զօրքը մտաւ անցքը անարգել։ Ալբանացիները յոժարակամ հեռացան անցքից և բարձրացան լեռները։ Երկաթուղուն ձեռք չէ տրված. հաղորդակցութիւնը վերականգնվեց։

Ազդեցիկ ալբանացի Հաջի-Օմար-Բէքիրը, որին Աբդիւլ-Համիդը քանիցս ուղարկեց Ալբանիա հաշտարար միսիայով, այժմ կառավարութիւնից ուղարկված է Ալբանիա. Հաջի-Օմար-Բէքիրը կանգ է առել Սալոնիկում։

Պահեստի զինուորները Կավալայում և Սէրէսում յայտնեցին, որ չեն ուզում Ալբանիա գնալ իրանց եղբայրների արիւնը թափելու համար։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 20 ապրիլի

Պրիզրէնի շրջակայքում հանգիստ է։ Քաղաքի հետ հաղորդակցութիւնը վերականգնվեց։ Հեռագիրը և պօստը գործում են։ Ֆերիզովիչ տանող ճանապարհը պաշտպանում են զինուորները։ Իփէկում նկատելի հանգստութիւն է։ Մոտակայ լեռները դատարկվել են ալբանացիներից։ Դիակովոյի և Պրիզրէնի ու Իփէկի միջև երթևեկութիւն չը կայ։ Հեռագիրը և պօստը չեն գործում։ Շրջակայքը գրաւված է ալբանացիներով։ Ալբանական հրոսակախմբերը նորից խմբվում են Չերնոլէվի բոլորքը։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 19 ապրիլի

Կաչանիկի կիրճում հանգիստ է։ Ալբանացիների մի մասը դիրք է բռնել անմատչելի լեռներում, մի մասը գնաց Գելիանի շրջանը՝ այնտեղ գտնվող Օսման-փաշայի զօրքի դէմ պատերազմելու համար։ Չերնոլէվի շրջակայքում վերստին կուտակվում են մեծ թւով ալբանացիներ։ Զօրքեր են ուղարկված նրանց ցրելու համար։ Լուրերի համաձայն՝ ալբանացիները մեծ թւով կենտրոնացել են նոյնպէս Դիակովոյի և Իփէկի շրջակայքում։ Այնտեղ ուղարկվեցին օժանդակ գնդեր։ Սալոնիկ եկան երկու նոր բատալիոններ։ Եկան նաև իտալական մարտանաւեր՝ «Վիկտօրիօ Էմմանուէլ», «Կաօտիզ» և «Ռէգինա Ելենա»։ (Հ. Գ.)

—

Կ. Պոլիս, 16 ապրիլի

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Իփէկի, Պրիշտինի և Չերնոլէվի անցքի մօտերը ապստամբների հետ տեղի ունեցած ճակատամարտերը լուրջ չէին։ Կաչանիկի կիրճում ապստամբները պաշարված են զօրքերով։ Խաղաղացման գործը շարունակվում է։ Մասնաւոր տեղեկութիւններին նայած, ընդհակառակն, Շէվքէթ-Տուրգութ փաշան շրջապատված է ալբանացիներից, նրա զօրքերը քիչ են։ Ուսկիւբը իբր ապստամբների ձեռքումն է արդէն, զօրքերը մեծ կորուստներ են ունենում։ Դիպլօմատիական աղբիւրներից բղխող տեղեկութիւնների համաձայն, դրութիւնը չափազանց լուրջ է։ Երկաթուղային հաղորդակցութիւնը Միտրօվիցայում դադարել է. ապստամբները փչացրել են հեռագրաթելը։ Տեղիս պաշտօնական շրջանների տրամադրութիւնը, որ ցայսօր հանգիստ էր, դառնում է անհանգիստ։

Մամուլի մէջ պաշտօնապէս հաղորդված է, որ Րիկում ալբանացիները ժողով գումարելով որոշում են կայացրել՝ ճանաչել օրինական հրամայող ներկայիս Թագաւորող սուլթանին, պաշտպանել պետութիւնը ընդդէմ (?), խնդրել ուղարկել մի պարլամենտական յանձնախումբ և յետաձգել Ալբանիայում բարենորոգումների գործադրութիւնը։ Վերջում ալբանացիները երդվել են ոյժով պաշտպանել յիշեալ որոշումը։

Ալբանական պատգամաւորների առաջարկութիւնը՝ ուղարկել պարլամենտական յանձնախումբ Ալբանիայում կատարվող դէպքերի ուսումնասիրութեան համար՝ այսօր քննվում է պատգամաւորների պալատում։ Մասնաւոր մի տեղեկութիւն յայտնում է՝ իբր Տուրգութ փաշան վէրք է ստացել Կաչանիկի կիրճի մօտ եղած կռւում։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ ապստամբները Կաչանիկի կիրճում ջարդվել են, Իփէկը անվտանգ է։ Կատարվել են բազմաթիւ կալանաւորութիւններ ալբանացի պարագլուխների մէջ։

Ի նկատի ունենալով, որ պալատը մերժեց ռոճիկ նշանակել պրինցուհիների ամուսիններին, ֆինանսների մինիստրը հրաժարական տուեց։ (Հ. Գ.)

—

Սալոնիկ, 20 ապրիլի

Վերին Մօրավայում կռիւները շարունակվում են։ Պիրզլօվօ գիւղը ենթարկվեց ռմբակոծման. մի քանի տներ քանդված են. Դիակովոյի ալբանացիները յարձակվեցին Նախօվիչի գիւղում զօրքերի վրա։ Գիւղը քարուքանդ է արված։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թեհրան, 20 ապրիլի

Շահին գիտութիւնների ուսուցումը հեշտացնելու համար անուանի ընտանիքների 10 երեխաներից կազմված է յատուկ դասարան։ Մշակված է ծրագիրը։ Մեծ տեղ է տրված արաբական լեզուին։ Նախատեսված են ֆրանսերէնը և ռուսերէնը։ Կանանց մի մեծ խումբ ներս խուժեց մէջլիս, գանգատվելով հացի թանգութեան համար։ (Հ. Գ.)

—

Թեհրան, 16 ապրիլի

Մէջլիսը հաստատեց ներքին փոխառութեան նախագիծը։ Բաց են թողնվելու 100 րուբլիանոց թղթադրամներ՝ վեց տոկոսանի՝ արքունի կալուածքների ապահովութեամբ։ Շրջանառութիւնը յանձնված է Շահնշահի բանկին մինչև արտասահմանեան մասնագէտի գալուստը։

Սիփեհդարը ներկայացրեց մէջլիսին չափաւոր կաբինէտի նախագիծ։ Նացիոնալիստները պահանջում են ֆինանսների մինիստրի պաշտօնը տալ Բուսուղ-ուդ-Դովլէին։

Սիփեհդարը ամբողջ կաբինէտի ուղեկցութեամբ եկաւ մէջլիս և հաղորդեց, որ նախկին կաբինէտը իր նախագահութեամբ պաշտօնի է վերականգնվել։ Զինուորական մինիստրութիւնը յանձնված է սարդար Ասադին, ներքին գործերի մինիստր Սիփեհդարն է։

Թեհրանի նահանգապետը պատուիրագրեց կատարել ազգաբնակութեան վիճակագրութիւնը։

Դրութիւնը հարաւում վատթարանում է։ Շիրազ ուղարկված ֆեդայիների խումբը ջարդ է կրել աւազակներից Քէշմի մօտերը։ Կազերունում [illegible] ների խանը։ Շիրազը հրաժարվում է ընդունել Թեհրանից նշանակված նահանգապետին։ (Հ. Գ.)

—

Թեհրանից հեռագրում են „Рус. Вѣд.“ թերթին ապրիլի 15-ին.

Լուրջ տեղեկութիւնների հիման վրա, Պարսկաստանին յանձնվեց անգլօ-ռուսական միահամուռ մի յիշատակագիր, առաջարկով—չը մտնել առանց այդ պետութիւնների գիտութեան քաղաքական բանակցութիւնների մէջ ուրիշ օտարերկրեայ կառավարութիւնների հետ, նոյնպէս և չը տալ կոնցեսիաներ և չը կնքել փոխառութիւններ։

—

Թաւրիզ, 18 ապրիլի

Ուրմիա ուղարկվեցին 100 ֆեդայիներ՝ այսպէս անուանված Եփրեմի զօրախմբի ազգային գնդից։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 18 ապրիլի

Շէյխ Կադիրը շքախմբով մեկնեց Պոլիս։ Ճանապարհ ձգեցին բոլոր սահմանային քիւրդական ցեղերի առաջնորդները։ Շէյխը խոստացաւ վերադառնալ։ Կարծում են, որ նրան այդ չի աջողվի։ Ուրմիցիները գտնում են՝ թէ նա կը վերադառնայ նոր հրահանգներով։ (Հ. Գ.)

—

Արդաբիլ.— Տեղական ազգաբնակութեան բոլոր դասերը, կանայք և տղամարդիկ, քայքայված վերջին դէպքերից, դիմեցին Եփրեմին արտասուալի խնդիրքով պաշտպանելու բոլորը դժբաղդութիւններից պատճառ ռէակցիոնէր Րաշիդ-ուլ-Միւլքին։ Ռէակցիոներները շատ ճնշված են. լիբերալները ցնծում են։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

Երեքշաբթի, ապրիլի 20-ին, երեկոյեան հասարակական կլուբում Մոսկվայում կազմված «Ռուսաստանի ազգութիւնների միութեան ընկերութեան» ներկայացուցիչ Իլլի Սեմենօվ կարդաց մի ռեֆերատ այդ ընկերութեան ծագման և նպատակների մասին։ Դասախօսութեան նպատակն էր ցոյց տալ նոր ընկերութեան օգտակար նպատակը և յորդորել բանալ Թիֆլիսում ընկերութեան ճիւղ։ Ընկերութեան նպատակն է ռուսական կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգութիւնների կարիքների, կենցաղի և պատմութեան ուսումնասիրութիւնը, այն դիտաւորութեամբ, որ այդ ազգութիւնների մէջ հաստատվի փոխադարձ կուլտուրական մերձեցում և զարգանայ համակրական գիտակցութիւնը, լիակատար յարգանք տածելով հանդէպ դէպի ամեն մի ազգութեան անհատական առանձնայատկութիւնները։ Դասախօսութիւնից յետոյ եղաւ մտքերի փոխանակութիւն, որից յետոյ բաւական անձինք գրվեցին անդամ Մոսկվայի ընկերութեան, որի խորհուրդը կաշխատէ բանալ Թիֆլիսում ճիւղ։

ՀԱՅ ԱԶԳԱԳՐ. ԸՆԿ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

—

Ապրիլի 16-ին տեղի ունեցաւ Հայ Ազգագր. Ընկ. ընդհ. ժողովը նոյն ընկերութեան դահլիճում, ներկայութեամբ մօտ 25 անդամների։ Նախ քան ժողովի բացումը Ե. Լալայեան համառօտ կերպով զեկուցեց այն պեղումների մասին, որ ինքն է կատարել, և ցոյց տուեց իր գտած իրերը։ Այդ հակիրճ զեկոյցից յետոյ ժողովը բացվեց՝ նախագահութեամբ Ալ. Քալանթարի. քարտուղար ընտրվեց Գ. Լևոնեան։

Ժողովը, բացվելուց անմիջապէս յետոյ, միաձայն որոշեց դիմել Վեհ. Հայրապետին, որպէսզի սա իր հովանաւորութեան ներքոյ առնի Հայ Ազգագր. Ընկերութիւնը։

Դրանից յետոյ ժողովը պատւաւոր անդամ ընտրեց ընկերութեան խորհրդի նախագահ Ալ. Մելիք-Ազարեանին, որ ահա [illegible] ներ է մատուցել այդ ընկերութեանը։

Ապա ժողովը դիմեց 1908 և 1909 թ. թ. հաշիւների ընթերցմանը, որից երևաց, որ 1908 թ. ընկերութիւնը մուտք ունեցել է 3719 ր., ելք՝ 3784 ր., դեֆիցիտ 65 ր., իսկ 1909 թ. մուտքն է 3771 ր., ելքը՝ 3575 ր.։ Այսպիսով ուրեմն՝ առ 1-ն յունվարի 1910 թ. ընկերութիւնն ունի պատրաստի դրամ 195 ր.։

Ժողովն ի վերջոյ կատարեց ընտրութիւններ։ Խորհրդի անդամները վերընտրվեցին, բացի տ. տ. Ղարաջեանից և Յովհաննիսեանից, որոնք վաղուց էին հրաժարվել. ընտրվեցին Գ. Մելիք-Կարապետեան, Հմ. Վահանեան և Մ. Գէորգեան։ Խմբագրական մասնաժողովի անդամ ընտրվեցին Ե. Լալայեան, Ս. Տէր-Աւետիքեան, Ալ. Տէր-Յակոբեան, Մատենճեան, Քաջբերունի, Գ. ա.-ք. Աղանեան, Մուսայէլեան, Յ. Տէր-Յակոբեան։ Վերստուգիչ յանձնաժողովի անդամները նոյնպէս վերընտրվեցին։

ԲԺՇԿԱՊԵՏ Ա. ԲԱԲԱՅԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Ապրիլի 16-ին, աւագ-ուրբաթ, երեկոյեան ժ. 9-ին, Գեղագիտական-Գրական Սա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՈԼՍՈՅ ԿԵԱՆՔԷՆ

—

Կ. Պոլիս, 5 ապրիլ

Կարծես ներքին կեանքը խաղաղութեան նաւահանգիստը գտած է։

Ժողովուրդը ծիծաղադէմ խումբերով տաւրուբերման կուգայ Շիշլիէն մինչև Ղալաթիա։ Հասարակաց պարտէզին մէջ ալ սկսած է արտասովոր նուագերգութիւն մը։ Հակկը բէյը կը կարծուի ըլլալ դիւանագէտ մարդ. ալբանացիները կրցաւ սանձահարել, որով սա գաղափարը տուաւ, որ ուժ ունի Անատոլիի ներքին ապստամբ հակասահմանադրականներն ալ ի հարկին զսպելու։

Կակնկալենք և օրինաւոր է անշուշտ մեր այս ակնկալութիւնը։

Պետական վարչութիւնը ամենէն առաջ մեծ կարևորութիւն կուտայ զինուորական արտասովոր բարեկարգումին, և անշուշտ Թիւրքին ոչ-բարեկամ օտար պետութիւնները տմարդօրէն պիտի նախանձին Թիւրքին այս խոհական ընթացքին։

Յամենայն դէպս՝ եթէ Թիւրքը տակաւ շովինիզմի զոհ մը չէ, լաւ է, որ գիտակցութեամբ ամրապնդէ իր նշանակութիւնը. հպատակ ցեղերը Թիւրքին փրկութեանը մէջ կը տեսնեն իրենց իբր մարդ ապրելու մենաշնորհը։ Բռնապետական ներքին կռիւներով Թիւրքիան կորսնցուց իր նշանակութիւնը, զոր կուզէ ձեռք ձգել խաղաղասիրական քաղաքականութեամբ։

*

Ներքին խաղաղ կեանքի պատկերը հեշտօրօր հմայքով տպաւորուած կը մնայ մէջդ՝ ամեն անգամ, որ կանցնիս վեհապետին պալատին դիմացէն։

Պահակ զինուորներով պաշտպանուած չէ վեհապետին պալատը. բարի մարդը չարիք մը ակնկալելու երկիւղը չունի։ Ազատութիւնը երգի ներդաշնակութեամբ՝ կը ծածանի արքունական ապարանքին վրայ։

Եւ այն գիւղենաբոյր կապոյտ ծովը, որ մշտնջենաւոր օրօր մը ունի Վոսփորի ափունքին, սոսկումի դժնդակութիւնը կարծես իր ալքերուն մէջ խեղդեր է. իցի՜ւ թէ յաւիտենականօրէն թաղուած ըլլար անցեալին արիւնոտ յիշատակն այդ ծովին անդունդներուն մէջ։

Բնական էր այդ խորհրդածութիւնը. առաջին անգամն էր, որ ես Դոլմա-Բաղչէի եզերքէն նաւակ մտնելով պիտի եզերէի Թիւրք վեհապետներու ապարանքներու առջևէն։ Տասը տարի առաջ, այս փափագը ունէի. և ինչպէս կարելի էր... Բանտող ու բանտարկուած Համիդը արգիլած էր. Բէիւք-դէրէի շոգենաւը շատ և շատ հեռուէն կանցնէր այդ ապարանքներու դիմացէն։

Հիմա սահմանադրութիւնը ազատութիւն էր տուած. նաւավարները հարցուցին. «Բացուի՞նք»։ «Ո՛չ,—ըսի,—ճիշդ ապարանքներու եզերքէն երթալու ենք»։

*

Ձիւն կարապաթոյր երկայն ու նեղ նաւակը սկսաւ սահիլ։ Ձախակողմը կիյնայ արքունական պալատը, անդին ափունքը Սկիւտար իր վեհաշուք բնազեղ կղզիացեալ ժոխրակապոյտին մէջ անշշուկ մոռցուած կը մնայ։

Դոլմա-Բաղչէն ցոյց կուտայ իր գեղաքանդակ երկայն ճակատը։ Ու շինուածապետ Պալեանները անգամ մը ևս կարծեմ մտքիս մէջ։ Հայ հանճարը Պոլիս ամեն ցեղերէն վեր ու գերազանց յիշատակներ յանձնած է անմահութեան. ատոր հաւատարիմներն են Պալեան շէնքերը։ Թագաւորը իր արքունականներով կը բնակի Դոլմա-Բաղչէի մէջ. զինուորական նուագախումբը պարտէզին մէջ կը զարնէ Բուչինիի «Տոսկայէն» առաջին կտորը, ճարտարապետութիւն և նուագ՝ իտալական գեղն ու խոկոն դիւթանքն ներդաշնակութեան հետ կը զանգեն։ Պալատին գահոյքի սրահը գերազանց ծաղկանկար քանդակագործութիւն մըն է. Նիկողոս Պալեանի ճարտարապետութեան մէջ անով ստեղծուած է մարմարէ նրբաճաշակ փորագրութիւն մը։

Տոսկայի հոգեպարար երգ-ծփանքը նաւակի օրօրը կըլլար, ու Բէշիքթաշէն կանցնինք Չըրաղանի պալատին։

Մարմարէ հիասքանչ անտառ մը կրակէն ջարդուած՝ աւերակ է մնացած։ Սուլթան Ազիզի ապարանքը աւերակ է հիմա. արքունիքի շէնքերը 750 մետր երկայնութեամբ կը հասնին մինչև Օրթագիւղ։ Սուլթաններու մինչև ցարդ կանգնած պալատանց մէջ՝ ամենէն հոյակապը Չըրաղանն էր. և պահ մը իրաւունք տուի նաւավարին, որ կըսէր. «Տունը այրի անոր, որ ասոր մէջ կրակ ձգեց...»։ Արտաքինին գեղը՝ երգի լեզուով դեռ քեզի հետ կը խօսի, իսկ ներքինը մեռեալներէն պատասխան առնելու է, և կըսուի թէ ներսը ապշեցուցիչ գեղեցկութիւն ու ճաշակ կար։ Աննման փայտէ քանդակներ կրակին զոհ են եղած։ Չըրաղանէն հիմա միայն չորս պատերը մնացած են։

Տխրութեամբ կը բաժնուիմ այդ սգաւոր ափունքէն և 15 վայրկեան Օրթագիւղի ճամբին մէջ կը մնամ։ Սուլթաններու աղօթարանն է. այցելուներու առաջնորդ կիրթ մոլլա մը՝ Կարապետ Պալեանին գործը կը համարի զայն, սակայն Նիկողոսինն է։ Ոսկի վանդակ մըն է, թէ ներքին և թէ արտաքին զարդը գեղեցկութեամբ։ Մոլլան կըսէր, թէ սուլթան Մէջիդ Անգլիոյ թագուհիէն նուէր առած ոսկիէ վանդակի ձևով շինել տուած է այդ մզկիթը, և թէ այդ վանդակը մինչև ցարդ կը պահուի Ելդըզի մէջ։

Հիացումի նիւթ էր այդ մզկիթը, սակայն աւելի հիացայ մոլլային ընտանութեան վրայ։ Նուիրական տեղը կը բանար գեաւուրներու առջև, և խալիֆային աղօթած տեղը կը տանէր ցոյց կուտար, կը բերէր սուլթան Մէջիդի մօրը ընծայ մէկ Ղուրանն ու թերթելով զայն կիմացնէր, որ աննման սքանչելիք մըն էր գեղագրութիւնը. պարծանքով կըսէր, որ սուլթան Մէջիդ հիանալի գեղագրութիւն ունէր և թէ ինքը գրած էր այդ մզկիթին մէջ եղած մարգարէին և յաջորդներուն ոսկեքանդակ անունները։

Ու երանի թէ շուտով վերանար մոլեռանդութեան Թունաւոր խաւարութիւնը, որ Թիւրքին ու հպատակ ցեղերուն հաւասարապէս շատ տուժել տուաւ։

Ե.

ցնում բժշկապետ Ա. Բաբայեան կարդաց իր դասախօսութիւնը դարձեալ եկեղեցական առողջապահութեան հարցի մասին։ Դասախօսութեան գլխաւոր նիւթը վերաբերում էր այն քննադատութիւններին, որոնք լոյս են տեսել մամուլի մէջ բժշկապետի «Եկեղեցական առողջապահութիւն» գրքի մասին։ Առաջ բերելով բոլոր քննադատական կարծիքները, դասախօսը ներկայացրեց նաև իր հերքումները և համամտութիւնը որոշ կարծիքների հետ։ Դասախօսութիւնից յետոյ, նախագահութեամբ բժշկապետ Կ. Ստեփանեանի, տեղի ունեցան վիճաբանութիւններ, որոնց մասնակցեցին՝ բժիշկներ Բ. Աղասարեան, Օհանջանեան, Մխիթարեան, Ստեփանեան և պ. Սօլօվեան։ Երեկոյթը մեծ շահեկանութիւն էր ներկայացնում և բոլոր շօշափված հարցերը կենսական և լուրջ բնաւորութիւն էին կրում։ Ի վերջոյ ժողովը միաձայն շնորհակալութիւն յայտնեց յարգելի դասախօսին իր վերին աստիճանի շահեկան և լուրջ ռեֆերատի և յարուցած հարցի համար։

ՓՈՐՁԵՐԸ ՇԻՐԱԿՈՒՄ

I

Մենք յայտնել էինք, որ ապրիլի 21-ին, 22-ին և 23-ին Շիրակում նշանակված են գիւղատնտեսական փորձեր և զրոյցներ։

Ծրագիրը այսպէս է։ Փորձի կենթարկվեն մի քանի գութաններ և ցաքաններ, ցոյց կը տրվի սերմատ մեքենայի գործունէութիւնը և զրոյցներ տեղի կունենան երկրագործութիւնից, կաթնատնտեսութիւնից և մեղուաբուծութիւնից։

Դիտաւորութիւն կար նաև մի փոքր ցուցահանդէս կազմել հաւերի լաւ ցեղերի նմուշներից բաղկացած. բայց թռչնապահական ընկերութիւնը յետաձգեց այդ գործը մի ուրիշ անգամվայ համար։

Փորձերի նախապատրաստութեան և կազմակերպութեան համար դեռ Զատկից առաջ ուղարկվել էր Ալեքսանդրապօլ Ա. Աթանասեան։ Միւս մասնագէտները ուղարկվեցին Զատկից յետոյ՝ ներկայ լինելու փորձերի կատարման ժամանակ։

Եթէ եղանակը անձրևային չը լինի՝ փորձերը աջողութեամբ գլուխ կը բերվեն և մշակված ծրագիրը կիրագործվի ամբողջապէս։ Մենք կը տանք տեղեկութիւններ այդ փորձերի մասին։ Ա. Ք.

ՇՈՒՇՈՒ ԳՈՐԾԵՐԸ

Նախորդ համարում մենք տպեցինք Շուշուց ստացված մի հեռագիր, որով տեղական հայ հասարակութեան մի քանի ինտելիգենտ անձինք, յայտնելով թէ Ղարաբաղի կօնսիստորիայի վերջին ժամանակ իբրև նախանդամ կարգված Բենիկ վարդապետը արձակվում է՝ իր պաշտօնից և Մեսրոպ եպիսկոպոսն է ուղարկվում Շուշի, բողոքում են այդ կարգադրութեան դէմ։ Հեռագիրը միաժամանակ յայտնում է, որ քաղաքում մեծ յուզմունք է տիրում և ժողովուրդը մի քանի հարիւր ստորագրութիւններով դիմեց Կաթողիկոսին՝ խնդրելով թողնել Բենիկ վարդապետին իր պաշտօնի մէջ։

Նոյնանման հեռագիրներ ստացան նաև Թիֆլիսում բնակվող շուշեցիները և «Տարազ» խմբագրութիւնը։ Ստացանք և մենք մի հեռագիր, խնդրանօք նպաստել, որպէսզի արդարութիւնը ոտնակոխ չը լինի և ժողովրդի կամքը չարհամարհվի։ Այնուհետև ստացվեցին և զանազան նամակներ ու եկողներ Շուշուց, և այդ ամենից ըստացված տպաւորութիւնն այն է, թէ Բենիկ վարդապետի անակնկալ արձակումը իր պաշտօնից, որի մէջ միայն հազիւ երկու ամիս կայ՝ որ մտել է Կաթողիկոսի կոնդակով, հետևանք է կողմնակի ինտրիգների։ «Բենիկ վարդապետը,—ասում են այդ տեղեկութիւնները,—հետամուտ էր մաքրել Ղարաբաղի թեմի ազգային-եկեղեցական հաստատութիւնները ազգակործան սխրագործութիւններից. և ահա թայֆայականները կարողացան տապալել տալ նրան, և այդ պատճառով էլ մեծ է յուզմունքը ժողովրդի մէջ»։

Սակայն Մեսրոպ եպիսկոպոսն, որ դէպի Շուշի ուղևորվելիս մտել էր Թիֆլիս, բոլորովին այլ մեկնութիւն է տուել եղելութեան և յայտնել, որ Բենիկ վարդապետի արձակումը հետևանք է նրա ըմբոստութեան սինօդի կարգադրութիւնների դէմ կալուածական մի քանի հարցերի վերաբերմամբ և այն հանգամանքի, որ նա, մի սոսկ վարդապետ, տեղական քահանաների հետ միասին, մի վիրաւորական գրութիւն է ուղղել Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ եկեղեցիներում միտինգներ թոյլ տալու հարցի առիթով։ Սինօդը, անտանելի համարելով Բենիկ վարդապետի այդ վարմունքը, ստիպվել է արձակել նրան պաշտօնից և ուղարկել ապաշխարութեան համար Հառիճի վանքը, իսկ Մեսրոպ եպիսկոպոսին ուղարկել Շուշի ժամանակաւորապէս, թէ կալուածական խնդիրը կարգադրելու և թէ ժողովրդին բացատրելու, որ Բենիկ վարդապետի արձակումը օրինաւոր է և անհրաժեշտ՝ կարգապահութեան տեսակէտից։

Դժբաղդաբար, մենք առ այժմ հնարաւորութիւն չունենք ստուգել, թէ երկու կողմերի այս բացատրութիւնները որքան ճիշդ են և համապատասխան ճշմարտութեանը։ Սինօդը կարող էր վայրկենապէս խաղաղացնել խռոված և յուզված մտքերը, պաշտօնապէս յայտարարելով ի գիտութիւն ընդհանուրի գործի իսկական հանգամանքները, և այն ժամանակ հայ ժողովուրդը, մասնաւորապէս Շուշուինը, ինքը կը նկատէր, թէ որքան արդար կամ անարդար է եղել Բենիկ վարդապետի արձակումը պաշտօնից։

Չենք կարող ուրանալ և այն փաստը, որ Բենիկ վարդապետը այս երկու ամսվայ ընթացքում, որ ձեռնմուխ է եղել Ղարաբաղի թեմի գործերի կառավարութեան, կարողացել է որոշ դիրք, հեղինակութիւն և ժողովրդականութիւն ստեղծել իր համար մինչև այն աստիճան, որ, ինչպէս հաղորդում է «Տարազ» շաբաթաթերթը, ղարաբաղցիների մի խումբ դրել է նրա թեկնածութիւնը թեմի առաջնորդական պաշտօնի համար։

Բենիկ վարդապետի անձնական արժանիքների մասին կարծիքները տարբեր կարող են լինել։ Եւ «Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ մեր կանդիդատը Ղարաբաղի թեմի առաջնորդութեան համար Բագրատ վարդապետ Վարդազարեանն է. բայց պէտք է հիմնաւոր պատճառներ ունենալ արձակելու համար Բենիկ վարդապետին, որ կարողացել էր կարճ ժամանակում համակրութիւն ձեռք բերել։

Ուստի և մենք կը սպասենք, մինչև որ տրվեն նրա արձակման մասին պաշտօնական տեղեկութիւններ և լուսաբանութիւններ։

Ի հարկէ, եթէ երևաց, որ, արդարև, Բենիկ վարդապետը ըմբոստացել է սինօդի օրինական կարգադրութիւնների դէմ և յանդգնել է վիրաւորական գրութիւն ուղղել Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նրա վարմունքը պաշտպանել չէ կարելի և բողոքները նրա արձակման դէմ անընդունելի են։

Եւ մենք սպասում ենք լուսաբանութեան։ Հ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՑ

Պետերբուրգ, 6 ապրիլի

Մեկը միւսի ետևից, օր օրի վրա երեք նիստեր ունեցաւ Պետական Խորհուրդը և աւարտեց բիւջէն։

Կայծակի արագութեամբ էին թռչում թիւերը միմեանց ետևից և ստանում օրինական վաւերացումն։

Այստեղ էլ կուզէինք ընդհանուր ակնարկ ձգել այդ նիստերի վրա, որովհետև տեղի ունեցան մի քանի արտասովոր երևոյթներ, որոնց մասին լռել չենք կարող։

Առաջին երևոյթը, որով զբաղեցրեց մեզ Մարիինսկի պալատը, դա երկաթուղիների դեֆիցիտների խնդիրն էր։

Գիտենք մենք, ընթերցող, այդ առակը, բայց չը գիտենք դրանց աղբիւրը։

Եւ ահա Պ. Խորհրդի անդամ Ս. Մ. Բոտվանդը մեր առաջ բաց է անում դա…

— Չը գիտեմ ինչու,—ասում է նա,—հաշւետուութեան կողմից պետական եկամուտի այդ ճիւղը ամենաանչքաթողներից մէկն է։ Կառավարութիւնը անուշադրութեան է մատնել դրան և քննութեան չենթարկելով դրա աղբիւրները՝ երես ի վեր ձգել է տեղական վարչութիւնների վզին… Բայց մի մոռանաք, որ պետութեան աչքի ընկնող եկամուտի աղբիւրներից մէկը՝ դա երկաթուղային գծի շահագործումն է… Իսկ ինչ է անում կառավարութիւնը իր տարական 80 միլիոնանոց դեֆիցիտները ծածկելու համար։ Նա, փոխանակ կանոնաւորելու այդ ճիւղը, տարէ-ցտարի աւելացնում է տարիֆների վարձը և դրանով աւելի ևս ամուր խեղդում մեր երկրի առևտրա-արդիւնաբերութիւնը։ Երկաթուղագծային տարիֆները,—եզրափակում է նա,—պէտք է հիմնվեն տնտեսական և առևտրական սկզբունքների և ոչ թէ ֆիսկալնի միջոցների վրա, եթէ, ի հարկէ, մենք ուզում ենք տնտեսապէս բարենորոգել մեր երկիրը։

Շատ պարզ են, ընթերցող, ուստի, երկար կանգ չառնելով, անցնենք երկրորդ երևոյթին…

Դա ծովային մինիստրի նախահաշիւն է։

Երբ այդ հարցը քննվում էր Պ. Դումայում, Կազանի դեպուտատ Ի. Վ. Գոտնեվը նկատեց, որ պատերազմից փչացած նաւերի վերաշինութեան համար յատկացված գումարները չեն ծախսվում իրանց նպատակներին, և, ով զարմանք, զանազան իշխանուհիները գնում են իրանց տան համար բիւրեղեայ վազեր, մարմարիոնեայ լուացարաններ, շքեղ մահճակալներ, պլինձներ, գդալներ, ժամլաթեր և այլն կահկարասիներ…

Սա, ի հարկէ, երկիրը արտաքին թշնամիներից «պաշտպանելու» համար է…

Կասկած չը կայ…

Պ. Դուման, ուշադրութիւն դարձնելով այդ երևոյթի վրա, խաթրը չը կոտրելու համար միայն, 15 միլիոնի փոխարէն այս տարվայ ծախսերի համար յատկացնում է 11 միլիոն, միայն այն պայմանով, որ Պ. Խորհուրդը անյապաղ սենատորական վերաքննութիւն նշանակի և ստուգի անցեալ ծախսերի մանրամասները…

Նոյն հարցը Պ. Խորհրդում ուրիշ բնաւորութիւն է ստանում…

Գեն.-ադիւտանտ, ադմիրալ Ն. Չիխաչօվը գտնում է, որ ռուսական նաւատորմիղը չէ դադարում անմիտ ծախսեր անելուց անթիւ նաւատորմերի վրա։

— Մեր նաւատորմիղը,—ասում է նա,—ույժի կողմից 7-րդ տեղն է բռնում, մինչդեռ նաւատորմերի քանակից՝ 2-րդ։ Եապօնիան, որ $1^1/_2$ անգամ ուժեղ է մեզանից, ընդամենը 33,000 նաւաստի ունի, Իտալիան՝ 28,500, իսկ մենք 54,000։ Մեր նաւատորմիղը հալվում է ծովի վրա որպէս ապ, իսկ նաւաստիները աճում են սունկերի նման։ Չը մոռանանք, որ իւրաքանչիւր նաւաստի մեզ նստում է տարեկան 600 ր.։

Իսկ ադմիրալ Ֆ. Դուբասովը, չը համաձայնվելով Պ. Դումայի որոշման հետ, և դրանց մէջ եղած տարաձայնութիւններին վերջ տալու նպատակով, առաջարկում է յատկացնել տալ ծովային մինիստրին 35 միլիոն ռուբլի, որից յետոյ միայն Ռուսաստանը թէ կունենայ բաւական ուժեղ նաւատորմիղ և թէ այդ աւէ-կօսէները վերացած կը լինեն։

— Ի հարկէ,—պաշտպանում է դրան ադմիրալ Ա. Բիրիլեօվը,—ինչու համար էք աչքի փուշ շինել նաւատորմիղի խնդիրը… Ուզում էք գործը լաւ ընթանայ, վերացրէք այդ կօմիսիաների հարցը… կենտրոնացրէք գործի իրականութիւնը մէկ անհատի ձեռքում և տուէք շատ փող. այն ժամանակ միայն կարելի է երաշխաւորել, որ գործը չի կաղայ… Երբ մի գործում մի քանի մարդկանց ձեռքերն են խառնվում, այնտեղ գործը միշտ խճճվում է… Պէտք է գործը մի մարդու յանձնել և տալ շատ փող։ Մեզ հարկաւոր է առնուազն 18 միլիոն, իսկ դուք ասում էք՝ «ահա ձեզ 11 միլիոն. ծախսեցէք. երբ փողը պակասի՝ մենք նորից կը տանք»։ Բայց ինչ էք կարծում. ով ումն է խաբում. մենք ձեզ թէ՞ դուք մեզ… Ռուսաստանին ենք խաբում…։

Այստեղ էլ կասկած չը կայ…

Վերջապէս ամբիոն է բարձրանում ծովային մինիստր վիցէ-ադմիրալ Վօեվօդսկին և վաւերացնում է նախկին հռետորների ասածները գումարների աւելացման մասին։

Պետական Խորհուրդն էլ չէ ուզում վիրաւորել դրանց և, բեկանելով Պ. Դումայի որոշումները, ընթացիկ տարվայ ծախսերի համար յատկացնում է 14 միլիոն ռուբլի։

Իսկ վերաքննութեան խնդիրը մնում է մինիստրական արխիվում պահված։

Սպասենք…

Մի գուցէ յետագայ բիւջէին կարողանան հասցնել… արդէն սեփական տների շինութիւնը։ Մ. Աղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Մշակի» խմբագրութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր հաստատութիւններին և անհատներին, որոնք հեռագիրներով, նամակներով և անձամբ շնորհաւորեցին խմբագրութեանս զատկական տօների առիթով։

◆ Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ զինւորական-նահանգական դատարանի քննութեանը յանձնվեց Գանձակում տեղի ունեցած քաղաքապահ ոստիկան Խորէն Խօջայեանի սպանութեան գործը։

◆ Մեր թղթակիցը հեռագրում է մեզ Շուշուց, ապրիլի 21-ին, որ գաւառում սպանված է Շուշու գաւառապետ Լակատօշը և դիակը բերված է քաղաք։ Գանձակի նահանգապետը գնացել է Շուշու գաւառ։

◆ Մի քանի ժամանակ առաջ Բեռլինում վախճանվեց շուշեցի Անդրէաս-բէկ Թիւնիբէկեանցը որ մշտապէս ապրում էր Թիֆլիսում, ուր ունի և մի մեծ հոյակապ տուն Գրիբօյեդօվսկայա փողոցում։ Նա գնացել էր Բեռլին բժշկական օպերացիայի ենթարկվելու և այդտեղ թոքախտ ստանալով վախճանվել էր։ Նրա մեծ եղբայրը՝ Իսաջան-բէկ Թիւնիբէկեան՝ գնալով Բեռլին բերել է եղբօր մարմինը, որի թաղումը կատարվելու է այսօր։ Հանգուցեալը անզաւակ լինելով՝ իր բաւական խոշոր հարստութիւնը կտակել է իր կնոջը այն պայմանով, որ կինը վայելէ եկամուտը և տոկոսիքը ցմահ, իսկ նրա մահից յետոյ տունը պէտք է անցնէ Թիֆլիս քաղաքին, և քաղաքային վարչութիւնը ամեն տարի պէտք է տան եկամուտը, որ տարեկան 5,000 ր. գումարից աւելի է, բաժանէ հայ-լուսաւորչական չքաւոր ընտանիքներից ամենակարօտեալներին այն պայմանով, որ ամեն մի ընտանիքի տրվի 25 ռուբլուց ոչ աւելի։ Ենթադրվում էր, որ հանգուցեալը, լինելով շուշեցի, կտակէր մի գումար կամ Շուշի քաղաքին, կամ Ղարաբաղի թեմական դպրոցին, բայց հիւանդութիւնը խանգարել էր բարեփոխել կտակը։ Յոյս կայ, որ հանգուցեալի կինը, որին կտակված է և դրամական հարստութիւն, բացի տան եկամտից, կաշխատէ յաւերժացնել ամուսնու յիշատակը հայրենիքում։

◆ 1911 թ. մայիսից Թիֆլիսում կը սկսվեն այն յատուկ յանձնաժողովի նիստերը, որ պաշտօն ունի զբաղվել Անդրկովկասի քաղաքներում նոր կանոնադրութեամբ պետական զէմստվային հարկ մտցնելու խնդրով։ Անշարժ գոյքերի՝ քաղաքներում՝ առնվելու են զուտ եկամտի $6^0/_0$-ը։

◆ Ապրիլի 20-ից Թիֆլիսի 1-ին արական գիմնազիայի շինութեան մէջ բացված է կովկասեան նկարիչների ընկերութեան պատկերների ցուցահանդէսը։

◆ Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ քաղաքային վարչութեան անդամ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը, որ գնացել էր Թիֆլիս քաղաքի փոխառութեան վերաբերեալ յանձնարարութեամբ։

◆ Խարկօվից Եղիա Տաղչնիկեան, ի դիմաց «Խարկօվի անասնաբուժական ինստիտուտի հայ ուսանողների ինքնազարգացման և ինքնակրթութեան խմբի», շնորհակալութիւն է յայտնում Յովհ. Փանեանին այն բանի համար, որ վերջինս այս տարվայ մի օրինակ «Մշակ» է նուիրել յիշեալ կազմակերպութեանը։ Նոյնպէս Խաչակապ գիւղից (Գանձակի գ.) Յ. Շիրվանեանը, ի դիմաց տեղական ուսումնարանի աշակերտների, շնորհակալութիւն է յայտնում Բագուի նաւթարդիւնաբերական «Արամազդ» ընկերութեանը յիշեալ դպրոցին այս տարվայ մի օրինակ «Մշակ» նուիրելուն համար։

◆ Դրական կերպով վճռվեց Թիֆլիսում պոստ-հեռագրական սեփական շէնք կառուցանելու հարցը։ Նոր շինութիւնը կառուցանվելու է Գօլօվինսկի պրօսպեկտի վրա այն տեղում, որ ներկայումս գտնվում է պոստային երթևեկութեան կայարանը, և աւարտվելու է հինգ տարում։ Արդէն ձեռնարկված է նախագիծ կազմելու աշխատանքներին։ Վերջապէս Թիֆլիսի ազգաբնակութիւնը մօտիկ ապագայում կազատվի այժմեան անձուկ և չափազանց անյարմար շինութիւնից։

◆ Ապր. 16-ին կէսօրվայ ժ. 12 և 15 րոպէին Կարսի երկաթուղագծի 109-րդ վերստի վրա պոստային № 72 գնացքը, սարից պոկված քարի ընկնելուց, խորտակվեց։ Բարեբաղդաբար մարդկային զոհեր չեղան, եթէ չը հաշւենք մեքենավարի և նրա օգնականի թեթև ջարդուածքները։ Հաղորդակցութիւնը այժմ կատարվում է օժանդակ գծի միջոցով։ Մի քանի վագոններ խորտակման ժամանակ ջարդվեցին։

◆ Ապրիլի 20-ին ցեր. ժ. 3-ին Կովկասի Փոխարքայի պալատում հրաւիրված էին պարահանդէսի Թիֆլիսի յունկերների դպրոցի սաները և ս. Նինայի օրիորդաց ուսումնարանի սանուհիները։ Պարերից յետոյ տրվեց ճաշ 250 հոգու։

◆ Այսօր, հինգշաբթի, ապրիլի 22-ին, Կ. Հ. Բ. Ընկերութեան դահլիճում (Աբասաբադսկայա հրապարակ) կը կայանայ առաջին անգամ մանկական երեկոյթ, ղեկավարութեամբ տիկ. Իւլիա Սպենդիարեանի։ Երեկոյթը, որ խոստանում է բովանդակալից լինել և որին մասնակցում են Խուդադեան որբանոցի սաները, անշուշտ իրան կը գրաւէ մեր հասարակութեան և առանձնապէս ծնողների ուշադրութիւնը։

◆ Թաւրիզում սկսել է հրատարակվել մի նոր հայ շաբաթաթերթ «Զանգ» անունով։ Մենք ստացանք այդ շաբաթաթերթի 2-դ համարը միայն, իսկ առաջինը դեռ չը ստացանք։

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, առաջիկայ մայիս ամսի սկիզբներին տօնելու են Թիֆլիսում յայտնի ատամնաբոյժ Ն. Կամայեվի բժշկական գործունէութեան 25-ամեայ յօբելեանը։ Ինչպէս յայտնի է, ատամնաբոյժ Ն. Կամայեվը շնորհիւ իր ատամնաբուժական գործունէութեան վայելում է մեծ ժողովրդականութիւն ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ և Կովկասում ու Ռուսաստանում և նաև յայտնի է գիտական շըրջաններին։

◆ Ապրիլի 20-ին Թիֆլիսում սիրային հողի վրա իր կեանքին վերջ դրեց Թիֆլիսի պոստային հեռագրատանը ծառայող Ելենա Տուրկինան, 18 տարեկան։

◆ Մեծ-Ղարաքիլիսայից իբրև հաստատ լուր մեզ հաղորդում են, որ այնտեղի ծխ. երկսեռ դպրոցի աւագ-ուսուցիչ Ա. Սինանեան, իբր մի անախորժ վարմունքի համար, նոյն դպրոցի ուսուցչական և հոգաբարձական կազմերի միահամուռ առաջարկութեամբ թողել է իր պաշտօնը։

◆ Զարդախլուից (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Դաշտային մկները մեծ վնասներ են տալիս արտերին. եթէ այսպէս շարունակվի, կարճ ժամանակում ամբողջ ցանքերը կոչնչանան և գիւղացին կանգնած կը լինի քաղցի դռանը։ Այս մասին արդէն պաշտօնապէս յայտնված է պատշաճաւոր իշխանութեան, բայց մինչև օրս ոչ մի կարգադրութիւն չէ արված»։

◆ Սեւաստօպօլից մեզ գրում են, որ Ծաղկազարդի կիրակին տեղական հայոց եկեղեցում կարդացվել է Վեհ. Հայրապետի անդրանիկ կոնդակը։

ԼՈՒՐԵՐ ԲԱԹՈՒՄԻՑ

◆ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ կամաւոր նուէրներ են հաւաքվել հայ հասարակութեան մէջ՝ Զատկի առիթով աղքատներին բաժանելու համար։

◆ Մեր ծխ. դպրոցի ծնողական ժողովի ներկայացուցիչները գեղեցիկ գործ են ըսկսել. դպրոցի բաւական ընդարձակ բակը, որ մինչև այսօր մնացած էր քարքարոտ ու գրեթէ խոպան վիճակի մէջ, կարգի է բերվում, որով և ահագին դիւրութիւն է տըրվում աշակերտ-աշակերտուհիներին խաղալու համար։

◆ Յ. Խուդադեան, որ տասն տարուց աւելի է ինչ վարում էր Թիֆլիսի առևտրական բանկի Բաթումի բաժանմունքի կառավարչի պաշտօնը, մայիսից՝ կլիմայական պատճառով՝ թողնում է Բաթումը և տեղափոխվում է Թիֆլիս։ Իր պաշտօնավարութեան ընթացքում բաւական ծառայութիւններ է մատուցել տեղական բարեգործական ու կրթական և դպրոցական գործերին անխտիր։ Մասնակցել է հայ համայնքի եկեղեցական ու ծխական կեանքի բարգաւաճմանը։ Ընդհանուր առմամբ Բաթումը գոհ է եղել նրանից։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, ապրիլի 20-ին, Զուբալովեան ժողովրդական տան հայկական սեկցիայի 41-րդ ներկայացմանը թատերասէրների խումբը խաղաց Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ» 3 գործ. կօմեդիան։

Արդարև, Սևումեան (Աբիսողոմ աղա), Թորոսեան (Մանուկ աղա) և միւս դերակատարները խաղում էին անբռնազբօսիկ, աշխատելով ամեն կերպ յարմարվել պիէսի գործող տիպերին, սակայն պէտք է նկատենք, որ պիէսի ամբողջութիւնը չը մնաց սոսկ այն պատճառով, որ կաղում էր—եթէ չասենք բացակայում էր—Թիւրքահայ ոգին ինչպէս խօսակցութիւնների, այնպէս և շարժուածքների, միմիկայի ու ժեստերի մէջ. այդ իսկ պատճառով՝ այդ օրվայ «Մեծապատիւ Մուրացկանները» այն ախորժելի և համ ու հոտով պատկերանալուց հեռու մնաց, որպիսին կարողանում են ներկայացնել Թիւրքահայ դերասանները։

Աւչեան-Ավարսկու մի գործ. «Էմման», որ խաղացվեց իբրև «դրամատիկական էտիւդ», նորութիւն էր հայ բեմի վրա։ Ցաւօք սրտի ընդգծենք, որ դա մի թերի գրուածք է, արդիւնք երիտասարդական վառ երևակայութեան և եւրօպական որոշ ուղղութեան գրողների երկերի ազդեցութեան։ Պատմենք համառօտակի բովանդակութիւնը։

Անդրէյը (Սևումեան) ամուսնացած է Լիզայի (Յասմիկ) հետ։ Բայց իր ամունու մենախօսութիւնից երևում է, որ նա սիրելիս է եղել մի ուրիշ արարածի, Էմմային, որին տասն տարի անցնելուց անգամ չէ մոռացել։ Եւ այդ «դրամատիզմի» (?) հանգոյցը լուծվում է նրանով, որ Անդրէյը իր մտերիմ ընկեր Բարիսի (Հայկազեան) առաջ բանում է իր սիրտը էլ աւելի սիրոյ խոստովանութեամբ և, Էմմայի ուրուականը տեսնելուց ու նրա հետ յախուռն «բացայայտվելուց» յետոյ, ընկնում է անշնչացած…

Ինչպէս տեսնում էք, չը կայ պատճառի և հետևանքի ուրոյն շերտաւորում և տիպերի պատկերացումն։ Հեղինակը չէ համոզում մեզ, թէ պէտք է հաշտվենք Անդրէյի և Լիզայի կենակցութեան հետ այն պարագայում, երբ Անդրէյը բուռն կերպով սիրել էր առաջին սիրոյ առաջին էակին՝ Էմմային։ Անյայտ է մնում Էմմայի էութիւնը և այն հանգամանքը, թէ նա յիրաւի կենդանի կին է, քանի որ իբրև ուրուական ներկայանում է Անդրէյին, բայց ոչ ապաքէն կենդանի մարդիկ ուրուականներ են դառնում…

Չը շարունակելով պիտի հետևցնենք, որ Աւչեանի դրամ. էտիւդը կոչված չէ այդպիսին լինելու, թէև հեղինակը՝ պարզամտութեամբ ասես՝ ջանում է ճառել հասարակական մի լուրջ հարցի մասին—անհաւասար և անհամապատասխան ամուսնութեան մասին։

Պիէսը ապագայ ունենալ չէ կարող և, բացի այդ, այնքան էլ սազական չէ ժողովրդական բարքերի արտայայտութեանը։ Եա.

—

Թիֆլիսի Արքունական թատրոնում ապրիլի 19-ից սկսել է տալ իր դրամատիկական ներկայացումները ռուսական մի դրամատիկական խումբ, Ն. Կրուտինինի և Մ. Մարտովի ղեկավարութեամբ։ Երկուշաբթի, ապրիլի 19-ին, խումբը իր առաջին ներկայացումը տուեց և խաղաց Պօտապենկօյի «Բարձր դպրոց» պիէսան։ Խմբի առաջնակարգ ույժերն են Մարտով, Սօֆիա Զարուսկայա, Սմիռնով, օր. Պօլօվիցկայա։ Առհասարակ խումբը լաւ տպաւորութիւն է թողնում։

—

Կալեր գ. (Զանգեզ. գ.), 6 ապրիլի

Ամսիս 4-ին մեր գիւղի ծխ. միդասեան երկսեռ դպրոցի դահլիճում ուսուցչի ձեռներէցութեամբ տրվեց գրականական ցերեկոյթ և թատերական ներկայացում։

Դահլիճը ծայրէ ի ծայր լիքն էր երկսեռ հասարակութեամբ։

Հանդէսի գրական մասում աշ.-աշակերտուհիները արտասանեցին հայերէն և ռուսերէն լեզուներով ոտանաւորներ։

Ներկայացման մասում խաղացին նոյն աշ.-աշակերտուհիները «Ես իշխան եմ» 1 գործ. կատակերգ. և «Դասարանում» կօմ. 1 գործ.։ Ընդմիջումներին նուագում էր երգեցիկ խումբը։

Ներկայացման վերջում ուսուցիչը խօսեց թատրոնի նշանակութեան և դպրոցի սեփական շինութիւն ունենալու մասին։ Հասարակութիւնը խոստացաւ մօտ օրերս անպատճառ սկսել դպրոցական գործը։

Հանդիսականները 6 ր. 5 կ. նուիրեցին նոյն դպրոցի բոլոր սաներին և շնորհակալութիւն յայտնեցին ուսուցչին և իրանց դպրոցին նպաստող «Արամազդ» ընկ. ուսումն. խորհրդի անդամներին, որից յետոյ գոհ սրտով հեռացան դպրոցի դահլիճից։

Ա. Բաբեան